լով՝ փակել էր աչքերը օտարութեան մէջ։ Գետի պէս կը յորդէին արտասուք Նորա նախշուն աչքերէն. առաքինազարդ ծերունի հօր յիշատակը, որ զինքն անծայր սիրով կը սիրէր, միակ, որք և անտէր, հայրենի տան դերբկին վրայ կը տեսնար ինք զինքը. Նա չէր գիտեր՝ որ Նոյն միջոցին՝ երբ ինք զինք իբրև թէ դերբուկին քարերէն մին, չէնքէ դուրս մնացած՝ անտէր և անոք կը կարծէր, երկնաւոր՝ որբոց և այրեաց խնամատ Հայրն, իրեն տէր և ապագայ կը պատրաստէր։

Փաշան պիտի մեկնէր Կամենիցէ. Ստեփանիկ Նորանէ իւր հրաժարականն առնելով՝ գնաց դիմաւորելու եկաւոր կամ վերադարձող եղբարքը։ Ամէնքն մեծ և փոքր, քահանայ և աշխարհական, սիրով կը թօթուէին այդ առաքինի երիտասարդին ձեռքը, ամէնքն պատիւ կը սեպէին իրենց Նորա հետ խօսակցիլը. անմիջապէս Միքայէլ վարդապետին մօտէն կը դառնար Ստեփանիկ, երբ Նորա աչքին զարկաւ տխրագին Մարգարիտէ, որոյ սրտին յուզմունքն և թափած արցունքներն՝ Նոր գեղ, Նոր շնորհք կու տիրէին Նորա գեղեցիկ և պարկեշտ կերպարանաց վրայ. — « Այդ դու Մարգարիտէ », հարցական ձևով բացագանչեց Ստեփանիկ։ Մարգարիտէ տեսաւ իւր դիմաց փառաւոր երիտասարդ մի, ծանօթ կերպարարանքով, այլ տասը տարուան միջոց մեծապէս փոխուած, այրական մեծամեծ պեխերն ոլրած, կորիհ Նայուածքով, վայելչադէմ և վայելչակազմ, երեսը արևակէզ, գլուխը վայելուչ կարմիր ֆէս, որոյ ծոպը ետևի կողմէն կ'երերար։ Թէպէտ և դա այն վայելչադէմ պատանեակն էր, որոյ հետ շատ տարի հայրենի ծածքին տակ անմեղութեամբ խաղացել էին, այլ